ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«10» 02 2022թ.
№ Պ/2-200

«ՎԵՐԻՏԱՍ» ՍՊԸ
Արմավիրի մարզ, գ. Նորապատ 9փ., 3-րդ տ.
էլ. հասցե՝ veritasllc.tender@gmail.ru
ՀՎՀՀ 04424337
հեռ. 099-54-69-00

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՎԵՐԻՏԱՍ» ՍՊԸ -ի միջև 26.11.2021թ. կնքված ՆԳՀԱՊՁԲ-21-9/43-9 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թ. մատակարարել 55 հատ «Հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիր 5 մմ-23սմ, ատրճանակատիպ», սակայն մատակարարված ապրանքը պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով վերադարձվել է մատակարարին և անհամապատասխանությունը շտկելու համար տրվել է ողջամիտ ժամկետ (մեկ աշխատանքային օր): Տրված ժամկետում անհամապատասխանությունները չեն շտկվել, որի արդյունքում 55 հատ «Հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիր 5 մմ-23սմ, ատրճանակատիպ սպիրիտ» չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 10.02.2022թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ՎԵՐԻՏԱՍ» ՍՊ ընկերությունը՝ պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել ***73,999 (յոթանասուներեք հազար ինը հարյուր իննսունինը) ՀՀ դրամ*** որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և ***92,499 (իննսուներկու հազար չորս հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ***՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** և **900008000664** հաշվեհամարներին ենթակա են գանձման համապատասխանաբար ***1,849,980 (մեկ միլիոն ութ հարյուր քառասունինը հազար ինը հարյուր ութսուն) ՀՀ դրամ***, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և ***2,774,970 (երկու միլիոն յոթ հարյուր յոթանասունյոթ հազար ինը հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ***, որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am